

**ՊԱՏՃԵՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏԵՐՄԻՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ
(գիտատեխնիկական գրականության նյութերով)**

ՆԱՐԻՆԵ ԶԵՔԵՔՅԱՆ

Գիտության և տեխնիկայի զարգացման բուռն վերելքը, որը բնութագրվում է գիտության, արտագրության նորանոր ճյուղերի ու բնագավառների ստեղծմամբ, գիտական բազմաթիվ նոր հասկացությունների առաջացմամբ, իր կնիքն է դնում լեզվի բառապաշարի վրա, առաջ բերելով նոր տերմինների ստեղծման անհրաժեշտությունը: Գիտատեխնիկական առաջագիմությունը օբյեկտիվորեն պայմանավորում է բառապաշարի զարգացման ներքին պրոցեսը, որովհետև ռամեն մի լեզու, որ ուզում է մնալ արգի զարգացած լեզուների շարքում, հանդես գալ որպես գիտության լիարժեք լեզու, պետք է անընդհատ համալրվի, մշակվի, ճշգրտվի¹:

Գիտատեխնիկական տերմինաբանությունը, որը գիտության, տեխնիկայի, արտագրության տարբեր բնագավառների ու ճյուղերի բառապաշարն է ներկայացնում (այսինքն՝ «...գիտական ու տեխնիկական առաջագիմության ողջ բովանդակությունը...»²), լեզվի բառային կազմի բաղկացուցիչ մասն է: Հետևաբար, տերմինաբանական բառապաշարի միավորը՝ տերմինը, հիմնականում բառային կազմի միավոր է³: Այն բնորոշում է գիտության և տեխնիկայի հասկացությունները կամ անվանում որոշակի առարկաներ ու երևույթներ: Սակայն տերմինները, որպես բառապաշարի միավորներ, լեզվի համագործածական բառերից տարբերվում են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են անվանվող առարկայի, երևույթի իմաստի վերացարկման առավել մեծ ճշգրտությունը և մենիմաստության միտումը: Ընդ որում տերմինների մենիմաստությունը դիտվում է միայն տվյալ տերմինաբանական համակարգում: Չնայած դրան, լեզվի տերմինային և ոչ տերմինային բառապաշարների միջև գոյություն ունեն սերտ կապ ու փոխադարձ ազդեցություն: Մի կողմից տերմինաբանական համակարգի առանձին միավորներ ապատերմինացվում են (դետերմինալոգիզացիա)⁴, այսինքն՝ անցնում են համագործածական բառապաշարի մեջ (օրինակ՝ տիեզերանավ, հեռուստացույց, ինֆեռաթիո, էլեկտրակայան և այլն), մյուս կողմից ընդհանուր գործածության բառերը կարող են տերմինացվել (տերմինալոգիզացիա) և հանդես գալ որպես որևէ գիտաճյուղի կամ բնագավառի տերմինաբանական համակարգի միավորներ [օրինակ՝ թամբ (կափույրի), թև (մեքենայի), փեշ (մեկուսիչի, լիսեռի), մատ (մխոցի) և այլն]:

Սակայն բառերի վերաիմաստավորումը նոր տերմինների առաջացման միակ միջոցը չէ: Բառային կազմի տերմինաբանական շերտը, ինչպես լեզվի բառապաշարն ընդհանրապես, զարգանում է նաև ներքին ու արտաքին այն-

1 Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 9, էջ 93):

2 Է. Բ. Ա ղ ա յ ա ն, Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 1, էջ 85):

3 Միաբառ տերմիններից բացի գոյություն ունեն և գիտատեխնիկական տերմինաբանության մեջ տարածված են նաև բաղադրյալ տերմինները: Սրանք կայուն բառակապակցություններ են, որոնք պատրաստի ձևով ներմուծվում են խոսքի մեջ:

4 Տե՛ս Л. А. Капанадзе, Терминологическая лексика в общелитературном языке («Русский язык в школе», 1965, № 3, с. 69—70).

պիսի միջոցներով, ինչպիսիք են բառաբարդումը, բառածանցումը, փոխառությունը, պատճենումը և այլն: Գիտության ու տեխնիկայի բնագավառի յուրաքանչյուր նոր ձեռքբերում իր բառային արտահայտությունը ստանում է նախ և առաջ այն երկրի լեզվում, որտեղ կատարվել է տվյալ հայտնագործությունը: Եվ քանի որ այդ նոր նվաճումներն ու հայտնագործությունները շուտով գաղափարում են համայն մարդկության սեփականությունը, շատ հաճախ դրանց բառային արտահայտությունները՝ նոր տեմինները, փոխառում են այլևայլ լեզուներից: Այդպիսով փոխառությունը դառնում է տերմինաբանական բառապաշարի հարստացման աղբյուրներից մեկը: Իհարկե, խոսքը վերաբերում է միայն այն փոխառություններին, որոնք կատարվում են լոկ այն ժամանակ, երբ դրանց «համարժեքները չկան և կամ չեն կարող կազմվել առանց իմաստի աղճատման»⁵:

Հայերենը ևս փոխառյալ բազմաթիվ տերմիններ ունի: Սրանք, ենթարկվելով լեզվի հնչյունական, բառակազմական ու քերականական օրինաչափություններին, հարստացնում են բառապաշարը, ինչպես՝ էներգիա, էլեկտրոն, ռեակցիա, առում, ֆվանտ, տեխնիկա, մեխանիզմ, կարգան, գեներատոր, կարբյուրատոր, կարտեռ և դիտական ու տեխնիկական բազմաթիվ այլ փոխառյալ տերմիններ: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ «բառաստեղծական հարուստ ունակությունները, պատմական ավանդները, որոնց արմատները հասնում են մինչև խոր հնություն, հնարավորություն են տալիս... լեզուներին նոր բառերն ու տերմինները ստեղծել վաղեմի բառապաշարի հիմքի վրա»⁶, այսինքն՝ ներքին միջոցներով՝ իմաստափոխությամբ, բառաբարդմամբ, բառածանցմամբ, պետք է նշել, որ տերմինաբանության մեջ լայն տարածում է ստանում պատճենումը. նոր տերմինները ստեղծվում են հայերենի բառակազմական միջոցներով՝ օտար բնօրինակներին համապատասխան:

Տերմինաշինության բնագավառում ձևավորված այս միտումը բնորոշել է Գ. Զահուկյանը. «Լեզվի համակարգը, որպես ազգի անդամների հաղորդակցման ընդհանուր միջոց, ձգտում է համազգայնություն: Տերմինային համակարգը, որպես տվյալ բնագավառի գիտելիքների ու հասկացությունների արտահայտություն, ձգտում է համամարդկայնություն: Այս դեպքում նախ՝ մեծ թիվ են կազմում փոխառությունները, երկրորդ՝ ներքին բառակերտումը մեծ մասամբ հենվում է արտաքին կաղապարների (մոդելների) վրա, այսինքն՝ պատճենումը դառնում է բառակերտման հիմնական ուղին՝ հանդես գալով այլևայլ միջոցներով, ըստ պատճենման բնօրինակների»⁷: Ներկայումս, երբ ռուսերենը դարձել է ներմիութենական և արտամիութենական հաղորդակցման հիմնական միջոցը, երբ խորհրդային ու արտասահմանյան գիտության նվաճումներն իրենց բառային արտահայտությունը առաջին հերթին ստանում են ռուսերենում, հրակայական թվով տերմիններ պատճենումների ձևով հայերենի բառապաշար են մտնում ռուսերենից կամ դրա միջոցով այլ լեզուներից⁸:

⁵ Ս. Ղազարյան, Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երևան, 1945, էջ 9:

⁶ «Вопросы терминологии. Материалы Всесоюзного терминологического совещания», М., 1963, с. 15—16. Տերմինաբանության հարցերին նվիրված համամիութենական խորհրդակցությունում առաջ էր քաջված տերմինաբանության բնագավառում տարբեր լեզուների յուրահատկությունները հաշվի առնելու և մասնավոր հնագիտ ու բառակազմական հարուստ ավանդույթներ ունեցող լեզուների նյութական մեծ հնարավորությունները օգտագործելու հարցը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հայերենին ու վրացերենին:

⁷ Գ. Բ. Զահուկյան, նշվ. հոդվ., էջ 93:

⁸ Հետ այդպիսի տարբերվում են անմիջապես (ուղիղ) և միջնորդավորված պատճենումներ: Անմիջական պատճենումը կատարվում է անմիջապես այն լեզվից, որտեղ առաջին անգամ իր բառային արտահայտություն է ստացել տվյալ հասկացությունը կամ առարկան: Իսկ միջնորդավորված պատճենումը կատարվում է ոչ թե անմիջապես տվյալ տերմինը ստեղծող լեզվից, այլ որևէ ուրիշ լեզվի միջնորդությամբ:

Պատճենումը, որպես բառակազմական միջոց, սոսկ լեզվական իրողություն չէ, այլ միաժամանակ գիտական, մշակութային, նաև լեզվական շփումների արդյունք։ Ուստի այն, ի վերջո, կապվում է թարգմանության հետ։ Սակայն պատճենումը և թարգմանությունը չեն նույնանում, որովհետև վերջինիս արդյունքում ստեղծված ամեն նոր բառ դեռևս պատճենում չէ։ գոյություն ունեցող բառամթերքի միջոցով կատարվող թարգմանությունը (օրինակ՝ поршень—մխոց, шатун—շարժափե, клапан—կափույր, втулка—վառն, фланец—կցաշուրթ, маховик—թափաճիվ, подшипник—առանցքափայլ, кронштейн—կալուցանի, болт—հեղույս, шланг—փողրակ և այլն) էպես տարբերվում է պատճենումից, որն ինքն է ընտրում թարգմանության միջոցները։ Այսինքն՝ պատճենումը սոսկ թարգմանություն կամ սոսկ բառակազմություն չէ։ դրանում սերտորեն փոխկապակցվում են այս երկու պրոցեսները։ Այլ կերպ ասած, բառակազմական պատճենումը, որպես բնօրինակի թարգմանություն, ենթադրում է լեզվական նոր միավորների ստեղծում այդ բնօրինակի կառուցվածքի անմիջական ազդեցությամբ և բառակազմական սեփական միջոցներով։

Գիտական խոսքի ճշգրտությունն ու հակիրճությունը և բառապաշարի միավորներ հանդիսացող տերմինների յուրահատկությունները պայմանավորում են պատճենման, որպես տերմինակազմության միջոցի, առանձնահատկությունները։ Տերմինների արտահայտած հասկացությունների կամ առարկաներն ու երևույթներն անվանող բառի իմաստի առավել ճշգրիտ ու ամբողջական վերարտադրումը, նորաստեղծ տերմինների դուրընկալությունը և հեշտ յուրացումը, համապատասխանությունը լեզվի բառակազմական ու քերական օրինաչափություններին, բարեհունչ արտասանությունը, նոր ստեղծվող և արդեն գոյություն ունեցող տերմինների միօրինակությունը այն կարևոր սկզբունքներն են, որոնք ընկած են տերմինների պատճենման հիմքում։

Տերմինի իմաստի առավել ճշգրիտ վերարտադրման սկզբունքը (ստեղծվող նոր միավորների և բնօրինակի իմաստային համարժեքությունը) կիրառելիս հնարավոր է բնօրինակի և նորաստեղծ տերմինի բաղադրիչների բառացի համապատասխանության բացակայություն։ Այսպես, օրինակ, նավախիստեմ (бортвая система) բառում (գործածվում է առավելապես հոգնակի թրվով), թեև առաջին բաղադրիչների բացարձակ համապատասխանություն չկա⁹, սակայն բառը ճիշտ է արտահայտում բնօրինակի իմաստը։ Борт բառացիորեն նշանակում է «նավակող, կող», սակայն այնպիսի բառակապակցություններում, ինչպիսիք են на борту корабля (նավի վրա), на борту космического корабля (տիեզերանավում), взять на борт (նավի վրա վերցնել) և այլն ենթադրվում է «նավ» իմաստը։

Պատճենող լեզվի բառակազմական ու քերականական օրինաչափություններին համապատասխանող նոր տերմինների ստեղծման պահանջը թույլ է տալիս բնօրինակի և նորաստեղծ տերմինի կառուցվածքների անհամապատասխանություն։ Ինչպես նկատում ենք, բերված օրինակում (նավախիստեմ—бортвая система) տարրեր են բառակազմական կաղապարները. բառակապակցության դիմաց ստեղծվել է բարդություն¹⁰, Սա հայերենին բնորոշ և բավական տարածված երևույթ է, որը պայմանավորված է հայոց լեզվի բառակազմական հնարավորությունների ճկունությամբ։ Կարելի է թվարկել այդօրինակ բազմաթիվ կաղապարներ. водяная рубашка—ջրաշափիկ, поршневые пальцы—մխոցամառեր, колея колес—աճվանեաք, ветровое стекло—հողմա-

⁹ Երկրորդ բաղադրիչը՝ սխեմ (система), փոխառյալ բառ է, ուստի այսպիսի կազմություններն անվանում ենք մասնակի պատճենումներ, որոնք հակադրվում են լրիվ պատճենումներին, այսինքն՝ ազգային տարրերով ստեղծված (այդ թվում նաև իրենց կազմում հին, արդեն չգիտակցվող փոխառություններ ունեցող) կազմություններին։ Այս անվանումները պայմանական են։

¹⁰ «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», Երևան, 1973, էջ 12։

պակի, рулевое колесо—դեկանիվ, номерно: знак—համարանիշ, указатель поворота—դարձացուցիչ և այլն:

Ծրբեմն նույն տերմինը պատճենվում է բառակազմական տարբեր կաղապարներով, և հաճախ հանդիպում են ստեղծված զուգաձևությունների միաժամանակյա կիրառության դեպքեր: Սա լրիվ հակասում է գիտատեխնիկական տերմինաբանությանը ներկայացվող պահանջներին. հմմտ., օրինակ, водная рубашка—ջրաշապիկ և ջրային շապիկ, ветровое стекло—ճաղմապակի և ֆամու ապակի (կարծում ենք, երկրորդն անհաշող կազմություն է), рулевое управление—դեկակառավարում, դեկային կառավարում և դեկային վարում (վերջինս, ըստ մեզ, հաշող կազմություն չէ), указатель поворота—դարձացուցիչ, դարձի ցուցիչ և անգամ դարձացիչ սխալ կազմությունը: Հանդիպում են նաև այնպիսի կազմություններ, որոնք բառապաշարային տարբեր միավորներով են ներկայացնում միևնույն բնօրինակի պատճենումը: Սա նույնպես գիտական խոսքին անհարիր և գիտատեխնիկական տերմինաբանության մեջ շփոթ ստեղծող երևույթ է: Այսպես, стояночный тормоз տերմինը ներկայացվում է կանգառային արգելակ և դադարֆի արգելակ կազմություններով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դադարֆ-ը բայարմատից առաջացած գոյական է, որի մեջ որոշակի է գործողության իմաստը՝ «դադարելը, կանգ առնելը», իսկ կանգառ բառում բայական իմաստն ավելի թույլ է, քան գոյականականը՝ «կանգնելու վայր, կանգնատեղ», մեր կարծիքով նախընտրելի է դադարֆի արգելակ կազմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ կանգառ գոյականից առաջացած կանգառային ածականը ավելի շատ արտահայտում է «կանգառին հատուկ, կանգառին վերաբերող, պատկանող», քան «դադարի, կանգառի (կանգ առնելու)» իմաստը: Ինչ վերաբերում է рабочий тормоз-ի դիմաց ստեղծված աշխատանքային արգելակ և բանվորական արգելակ կազմություններին, ապա պետք է նշել, որ երկրորդ կազմությունը ճիշտ չէ, որովհետև այս կապակցության մեջ рабочий բառը նշանակում է ոչ թե «բանվորական», այլ՝ «բանող, աշխատող, աշխատանքային»: Ըստ այդմ էլ, կարծում ենք, ընդունելի է աշխատանքային արգելակ կամ, թերևս, բանող արգելակ կազմությունը: Ելնելով դրանից՝ рабочий объем-ը պետք է ներկայացվի ոչ թե բանվորական ծավալ տերմինով, ինչպես հանդիպում ենք առանձին դեպքերում, այլ բանուկ ծավալ կապակցությամբ, իսկ рабочая смесь-ը՝ աշխատանքային խառնուրդ կազմությամբ: Ինչպես ցույց են տալիս օրինակները, աշխատանքային և բանվորական ածականները որպես рабочий բառի կայուն զուգահեռներ ներկայացնելը, այսինքն՝ рабочий բաղադրիչով կազմված բառակապակցությունները որոշակի կաղապարով պատճենելը (рабочий—աշխատանքային/բանվորական), ճիշտ չէ: Տվյալ դեպքում դա պայմանավորված է մեր լեզվի առանձնահատկություններով. ուսերենի рабочий բառը հայերենում ներկայացվում է դրա նրբիմաստներն արտահայտող տարբեր բառաձևերով¹¹:

Տերմինակազմության պրոցեսում ձևավորվում են տարածվում են պատճենման կաղապարներ¹², որի հետևանքով էլ ստեղծվում են նույնակաղապար տերմինների շարքեր, մի երևույթ, որի ծավալումը թերևս պայմանավորված է տերմինների միօրինականացման պահանջով: Բերենք նույնակաղապար տերմինների ստեղծման մի օրինակ: Գրաբարում ենթակայական դերբայը ձևավորվել է -ոդ (-ող) մասնիկով: Սակայն պատճառական բայերի ենթակայական դերբայն ավելի շատ հանդիպում է -իչ-ով: Գրաբարում -իչ-ով կազմված բառերը դերբայական ձևեր են եղել: Այսօր էլ ուսերենի դերբայական ձևերին ա-

¹¹ РАБОЧ/ИЙ ած. ...5. տեխ. աշխատող, բանող, աշխատանքային, բանուկ, բանելու. ~колесо բանող անիվ, ~ХОД բանընթաց, բանելու շարժընթաց (Ա. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968, էջ 973):

¹² Այս մասին տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, Ն. Հ. Հեքեքյան, Ռուսերենից նորագույն բառապատճենների մասին (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, № 12, էջ 65—69):

ռանձին դեպքերում համապատասխանում են -իչ մասնիկով հայերեն կազմութիւններ [аш/ящ (ищ), ущ/ющ (ищ)-իչ]. օրինակ՝ противоослепляющий — ֆակտուրացուցիչ, маслосбрасывающий — յուղանետիչ, теплорегулирующий — ջերմակարգավորիչ և այլն:

Ժամանակակից հայերենում -իչ ածանցը հիմնականում գոյականական և ածականական իմաստներ է արտահայտում: Ըստ այդմ էլ, տեխնիկական տերմինների ստեղծման գործում մեծ տարածում են գտել մի կողմից՝ -тель —իչ կաղապարը (оглушитель — խլացուցիչ, распределитель — բաշխիչ, прерыватель — ընդհատիչ, стеклоочиститель — փայտվաքիչ, воздухоочиститель — օդավաքիչ, маслоотделитель — յուղազատիչ, омыватель — լվացիչ¹³ և այլն), մյուս կողմից՝ -н(ищ) —իչ կաղապարը (маслоизмерительный — յուղաչափիչ, маслоемный — յուղահաճիչ, самоподжимный — ինքնասեղմիչ, распределительный — բաշխիչ, противоугонный — ֆակահափրչտակիչ և այլն):

Տերմինների պատճենման ժամանակ հանդիպում ենք նաև այլ երևույթի. կարևոր չափանիշ ընդունելով ոչ միայն տերմինների արտահայտած հասկացությունների ճշգրտությունն ու ամբողջականությունը, այլ նաև բնօրինակի ու նորահաղմության բաղադրիչների և դրանց կառուցվածքների բացարձակ համապատասխանությունը, երբեմն ստեղծվում են հայերենին ոչ հատուկ բառային միավորներ: Այսպես, հայտնի է, որ ռուսերենի -н (ищ) կամ -ов//ев (ищ) ածականակերտ ածանցներին հայերենում համարժեք են -ային, -անի ածանցները: Օրինակ՝ тросовой (привод) — քաղցանային (շարժարեք), запасное (колесо) — պահեստային (անիվ), верхнеклапанный — վերկապույցային, рулевое (управление) — ղեկային (կառավարում), воздушный (фильтр) — օդային (քամիչ) և այլն: Ելնելով այս ածանցների համարժեքությունից՝ ռուսերենի четырехступенчатый, полнопоточный, трехзвенный, трехпозиционный, одностокный, четырехцилиндровый, двухнитевой, двухкамерный բարդ ածանցավոր բառերի դիմաց հայերենում համապատասխանաբար ստեղծվել են ֆառաստիճանային, լիաճոսային, եռաօղակային, եռադիրֆային, միասկավառակային, ֆառազլանային, երկթելանի, երկխցանի բարդ ածանցավոր կազմությունները: Սակայն հայտնի է, որ հայերենում թվական + գոյական կաղապարով կազմված բառերը, ինչպես նաև ածական + գոյական կաղապարով կազմված բարդությունների մեծ մասը ըստ խոսքիմասային պատկանելության ածականներ են¹⁴: Հետևաբար, վերոնշյալ բառերում -ային և -անի ածանցների առկայությունն ավելորդ է, քանի որ ֆառաստիճան, լիաճոս, եռօղակ (և ոչ թե եռաօղակ)¹⁵, եռադիրֆ, միասկավառակ, ֆառազլան, երկթել, երկխուց կազմություններն ունեն ածականի արժեք:

Պատճենման վերոնշյալ տարբեր դրսևորումները ամբողջությամբ չեն ներկայացնում նրա բոլոր առանձնահատկությունները տերմինաշինության բնա-

¹³ Омыватель տերմինը Լ. Պ. Շովալովի «Ավտոմոբիլ ՎԺԳՈՎԻՅԱ դրբի հայերեն թարգմանության մեջ (Երևան, 1975, թարգմ. Կ. Հ. Մարգարյան, Թ. Ա. Ղազանյան) ներկայացված է երկու համարժեքով՝ լվացիչ (էջ 27, բառացի պատճենում է) և ջրացայտիչ (էջ 23, 25, 32): Երկու բառաձևն էլ ռուս-հայերեն թարգմանական և հայերենի բացատրական բառարաններում զետեղված չեն: Սակայն է. Ազայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (Երևան, 1976) ներկայացված է ցայտիչ բառը «հեղուկը ցայտերով արտահոսեցնելու ծառայող (սարք, հարմարանք)» իմաստով: Ջրացայտիչ բառը (կոնկրետացնում է ցայտիչ-ի իմաստը, թեև ОМЫВАТЕЛЬ-ի պատճենումը չէ) ճիշտ է ներկայացնում տվյալ սարքը (հարմարանքը), ուստի և, մեր կարծիքով, ավելի ընդունելի է:

¹⁴ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1, Երևան, 1973, էջ 326—327:

¹⁵ Հայտնի է, որ բարդության՝ ձայնավորով սկսվող երկրորդ բաղադրիչն առաջինին միանում է առանց հոդակապի (այս մասին տե՛ս նույն տեղում, էջ 317):

գավառում: Սակայն քննարկված օրինակները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու տերմինների պատճենման ժամանակ ձևավորվող միտումների և դրանց հիմքում ընկած կարևոր սկզբունքների մասին:

КАЛЬКИРОВАНИЕ КАК СПОСОБ ТЕРМИНООБРАЗОВАНИЯ (по материалам научно-технической литературы)

НАРИНЭ ЭКЕКЯՆ

Р е з ю м е

Научно-техническая революция обуславливает процесс обогащения словарного запаса языка, в частности, терминологической лексики. Особое место среди разных способов образования терминов в армянском языке (образование сложных слов, заимствование и т. д.) ныне занимают заимствование и калькирование с русского или посредством русского с других языков.

В процессе образования терминов путем калькирования сформировались отдельные тенденции, такие, как, например, несоответствие составных частей кальки и оригинала в результате их полной семантической равноценности (ср. *бортовая система*—*նավախիտեմ*) или разница между их структурами, что является результатом словообразовательных возможностей армянского языка (*поршневые пальцы*—*մոտցամատեր*), образование моделей калькирования (*-ալի/յալի(ւի)*, *-լից/յուց(ւի)*—*իլ*; *противоослепляющий*—*հակակուրացուցիչ*). И. Т. Д.